ԳՈՒՐԳԵՆ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

Ծնվել է 1908թ., Կարսում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի դպրոցում:

1931թ.՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հիդրոտեխնիկայի ֆակուլտետն ավարտելուց հետո, աշխատանքի է անցել Հայաստանի ջրային տնտեսության համակարգում:

1940թ. նշանակվել է ՀԽՍՀ ջրատնտեսության ժողկոմի տեղակալ:

1947թ. նշանակվել է ՀԽՍՀ կոմունալ տնտեսության նախարար:

1953թ. ընտրվել է ՀԿԿ Երևանի քաղկոմի երկրորդ, իսկ 1954թ. մայիսին՝ առաջին քարտուղար:

1957-1960թթ. աշխատել է Երևանի քաղաքային խորհրդի գործկոմի նախագահ:

1961-1981թթ. ՀԽՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության պետն էր:

Մահացել է 1986 թվականին: